EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
PRESS RELEASE

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը 2013թ. ապրիլի 22-24-ը կազմակերպում է «Հայերենն իմ սրտում է» համահայկական երիտասարդական համաժողովը:

Ճանապարհածախսը և կեցությունը հոգում են մասնակիցները, իսկ սննդի, տրանսպորտի և կազմակերպչական ծախսերը՝ հրավիրող կողմը,:

Համաժողովին կարող են մասնակցել 16-30 տարեկան երիտասարդները:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **ս.թ. ապրիլի 20-ը**:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԵՐԵՆՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ Է»

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂԱՎ

Նպատակը

Հայ երիտասարդությունը պետք է սովորի և տիրապետի իր ինքնության հիմքը հանդիսացող մայրենի լեզվին: Համաժողովը նպատակ ունի դառնալու մի հզոր ազդակ, որ երիտասարդությունը սիրի հայոց լեզուն, իմանա և տարածի: Այն կարող է օգնել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երիտասարդությանը միմյանց ճանաչելու, կապեր հաստատելու գործում:

Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին մենք կանգնած ենք «Նոր Սարդարապատի» առաջ՝ մոռանալով մեր մայրենին: Հայ երիտասարդությունը պարտավոր է հաղթել այս պատերազմը ևս, այս մարտահրավերը ևս և մինչև 2015 թվականը հայոց լեզվի ուսուցումը դարձնի իր սուրբ գործը:

Համաժողովում թեմատիկ քննարկումների միջոցով կբարձրաձայնվեն համազգային կարևորության խնդիրներ և կառաջարկվեն նոր լուծումներ Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման ու հետևանքների վերացման, Արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման, լեզվի և մշակույթի պահպանման ուղղությամբ՝ դրանցում կարևորելով հայ երիտասարդության դերակատարությունը:

Անցկացման վայրը՝ Երևան, ՀՀ կառավարության նիստերի դահլիճ:

Ժամկետը՝ 2013 թ. ապրիլի 22-24:

Մասնակիցների տարիքը՝ 16-ից մինչև 30 տարեկան երիտասարդներ՝ երիտասարդական, ուսանողական կազմակերպությունների անդամներ Սփյուռքից, Հայաստանից և Արցախից:

Մասնակցության պայմանները՝ ճանապարհածախսը և կեցությունը հոգում են մասնակիցները, իսկ սննդի, տրանսպորտի և կազմակերպչական այլ ծախսերը՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը:

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԵՐԵՆՆ ԻՄ ՍՐՏՈՒՄ Է»
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Գ Ր Ա Ն Ց Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

Սիրելի՛ երիտասարդներ,

Մասնակցության համար խնդրում ենք լրացնել սույն գրանցման թերթիկը և որքան հնարավոր է շուտ, բայց ոչ ուշ քան **ապրիլի 20-ը,** ուղարկել ՀՀ սփյուռքի նախարարություն՝ panarmenianyouthparliament@gmail.com, mshakuyt.diaspora@mail.ru էլ.փոստի հասցեներով:
Ընտրված մասնակիցներին համաժողովի օրակարգը կուղարկվի մինչև ապրիլի 1-ը:
Հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել +37410585601-117 հեռախոսահամարով:

1.	Անուն, ազգանուն	
2.	Երկիր, հասցե	
3.	Հեռախոս /բջջային հեռախոս	
4.	Էլ. փոստ	
5.	Կազմակերպության (կամ համայնքի) անունը	
6.	Ո՞ր թեմատիկ խմբերի աշխատանքներին կուզենայիք մասնակցել (նշեք ներքևում):	

- ☐ Լեզվամշակութային հիմնախնդիրներ.
- ☐ Երիտասարդության հիմնախնդիրներ.
- ☐ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ.
- ☐ Բարձր տեխնոլոգիաների դերը և քարոզչության հիմնախնդիրները.
- ☐ Ըստ ցանկության՝ ներկայացնել Ձեր կազմակերպության պաստառը (A4-ից մինչև A0=4xA4)

P.S. Եթե ցանկություն ունեք համաժողովին ներկայանալու զեկուցմամբ, խնդրում ենք նախապես տեղեկացրեք՝ ուղարկելով թեմայի անվանումը:

Առաջարկություններ _____

_____